ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2020թ. **N____Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով, և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի հ.178-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Աշոտ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան, Աջափնյակ վարչական շրջանի, Նազարբեկյան թաղամասի հ.հ.43/30 և 43/11 հասցեներում, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող համապատասխանաբար 1000.0քմ և 1001.5քմ մակերեսներով հողամասերը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 07.08.2019թ. հ.07082019-01-0155 և 17.01.2020թ. հ.17012020-01-0189 վկայականներ) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Գ-1 թաղամասի հ.1/13 և Սիլիկյան 5-րդ փողոցի հ.70/5 հասցեների հարևանությամբ, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող համապատասխանաբար 1000.0քմ և 1001.5քմ մակերեսներով հողամասերի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավագանու սույն որոշման նախագծով նախատեսվում է Աշոտ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Աջափնյակ վարչական շրջանի, Նազարբեկյան թաղամասի հ.հ.43/30 և 43/11 հասցեներում, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող համապատասխանաբար 1000.0քմ և 1001.5քմ մակերեսներով հողամասերը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Գ-1 թաղամասի հ.1/13 և Սիլիկյան 5-րդ փողոցի հ.70/5 հասցեների հարևանությամբ, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող համապատասխանաբար 1000.0քմ և 1001.5քմ մակերեսներով հողամասերի հետ։

Նազարբեկյան թաղամասի հ.հ.43/30 և 43/11 հասցեներում գտնվող 1000.0քմ և 1001.5քմ մակերեսներով հողամասերի նկատմամբ գրանցված է Աշոտ Խաչատրյանի սեփականության իրավունքը՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 07.08.2019թ. հ.07082019-01-0155 և 17.01.2020թ. հ.17012020-01-0189 վկայականների:

Քննարկվող 1000.0քմ և 1001.5քմ մակերեսներով հողամասերը հանդիսանում են Երևանի քաղաքապետի 2004 թվականի հուլիսի 28-ի հ.1418-Ա որոշմամբ աճուրդային կարգով ձեռք բերված 12650.0քմ մակերեսով հողամասի մի հատվածը: Նշված 12650.0քմ մակերեսով հողամասը առանձնացված հատվածներով վաճառելու արդյունքում հողամասերը զրկվել են մոտեցման ճանապարհից, /մոտեցման միակ ճանապարհը ընդգրկված է «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ին պատկանող հողամասի սահմաններում/ և փաստացի ելումուտ չունեն:

Ներկայումս իրավիճակը շտկելու և տվյալ տարածքում քաղաքաշինական առումով առավել կանոնակարգված հատված ձևավորելու նպատակով նախատեսվում է կատարել հողամասերի փոխանակում, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել գույքերի արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև կնպաստի ճանապարհային գոտու և ընդհանուր օգտագործման տարածքների ձևավորմանը:

Համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի շուկայական արժեքների գնահատման հաշվետվությունների՝ Աշոտ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Նազարբեկյան թաղամասի հ.հ.43/30 և 43/11 հասցեներում գտնվող 1000.0քմ և 1001.5քմ մակերեսներով հողամասերի շուկայական արժեքը գնահատվել է համապատասխանաբար 16373000 /տասնվեց միլիոն երեք հարյուր յոթանասուներեք հազար/ և 16397000 /տասնվեց միլիոն երեք հարյուր իննսունյոթ հազար/ ՀՀ դրամ, իսկ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Գ-1 թաղամասի հ.1/13 և Սիլիկյան 5-րդ փողոցի հ.70/5 հասցեների հարևանությամբ գտնվող 1000.0քմ և 1001.5քմ մակերեսներով հողամասերինը՝ համապատասխանաբար 22462000 /քսաներկու միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար/, 10468000 /տաս միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար/ ՀՀ դրամ: Աշոտ Խաչատրյանը պարտավորվել է փոխանակման արդյունքում վճարել փոխանակվող հողամասերի գնահատված շուկայական արժեքի տարբերություն կազմող 160 000 /հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ գումարը:

Փոխանակվող հողամասերը ընդգրկված չեն հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 8-րդ գոտում:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա։

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՄԱՐՈՒԹՅԱՆ